

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2017 թ-ի հոկտեմբերի 5-ին կայացած գիտական խորհրդի նիստի

Օրակարգում՝

1. Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի մագիստրոսական կրթական ծրագրերի ստեղծման առաջարկ- հայտերի հաստատման և ներկայացման մասին:
2. 2017-2018 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի համապատասխան ծրագրերով ընդունելության մասին / առկա, հեռակա ուսուցում/;
3. 2016-2017 ուստարվա 2-րդ կիսամյակի լուծարքային շրջանի արդյունքների ամփոփում / առկա, հեռակա/;
4. Հաղորդում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կատարման և առաջիկա անելիքների մասին: Զեկուցող՝ ֆակուլտետի պատասխանատու դոց. Ա. Ղարազուլյան;
5. Ընթացիկ հարցեր:

1. Լսեցին՝ մագիստրասական ծրագրերի ստեղծման առաջարկների մասին հարցը:

Դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց ամբիոնների առաջարկած ծրագիր- փաթեթները:

Արտահայտվեցին՝ Գ. Պետրոսյանը, Ն. Խաչատրյանը, Ա. Մանասյանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն և նշված ժամանակահատվածում ներկայացնել ծրագրերը:

2. Լսեցին՝ 2017-2018 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Դեկան Ա. Բաղդասարյանը նշեց քննության օրերը և ներկայացրեց ամբիոնների կողմից նորացված ծրագրերը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն:

3. Լսեցին՝ 2016-2017 ուստարվա 2-րդ կիսամյակի լուծարքների արդյունքների ամփոփման մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Բոլոր ամբիոնների վարիչները, ներկայացրեցին իրենց ամբիոնների արդյունքները:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն:

4. Լսեցին՝ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կատարման և առաջիկա անելիքների մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Ֆակուլտետի պատասխանատու դոց. Ա. Ղարազուլյանը ներկայացրեց ֆակուլտետի դասախոսների մասնակցությունն այդ ծրագրին, որը բավականին դրական է: Ա. Ղարազուլյանը ներկայացրեց նաև նոր դասընթացների ծրագրերը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն:

5. Ընթացիկ հարցեր:

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

Նիստի քարտուղար՝ Ս. Սարգսյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2017 թ-ի նոյեմբերի 22-ին կայացած ընդլայնված խորհրդի նիստի

Օրակարգում՝

1. Ֆակուլտետի դեկանի 2016-2017 ուստարվա աշխատանքների հաշվետվությունը:

Նիստի աշխատանքներին ներկա էր ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանը:

Նիստի նախագահող Հ. Ավանեսյանը դրեց հաստատման օրակարգը:

Արտահայտվեցին՝ Դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց ֆակուլտետի մեկ տարվա աշխատանքի հաշվետվությունը: Նշված տարում ֆակուլտետն աշխատել է բավականին հազեցած ծրագրով: Հաշվետվությունը ներկայացվեց 3 հիմնական ուղղություններով: 2016-2017 ուստարին հազեցած էր գիտական կոնֆերանսներով, օր. Արիստոտելին նվիրված գիտաժողովը, և նյութերը տպագրվել են: Հաշվետու տարում Ընդհանուր հոգեբանության ամբիոնի կողմից կազմակերպվել է միջազգային գիտաժողով՝ 65 –ը արտերկրից: Փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնը ևս միջազգային գիտաժողովի կազմակերպիչ է եղել՝ համալսարանի ղեկավարության անմիջական մասնակցությամբ: Այս աշխատանքները նպաստեցին միջազգային կապերի ընդլայնմանը և գիտական փորձի փոխանակմանը:

Ֆակուլտետում պրոֆեսորադասախոսական կազմում եղել են որոշ փոփոխություններ, միջին տարիքը 44 է: Հրատարակվել են մենագրություններ, ձեռնարկներ և հոդվածներ: Ֆակուլտետի աշխատանքը ուսանողների կողմից գնահատվել է, միջինը 4.5-ից բարձր է: Հաշվետու տարում ֆակուլտետի աշխատանքներն իրականացվել են՝ համապատասխան ԵՊՀ-ի ռազմավարական ծրագրերի:

Ելույթ ունեցան՝ պրոֆ. Ս. Ջաքարյանը, պրոֆ. Գ. Շահվերդյանը, Գ. Արշակյանը, Հ. Հովհաննիսյանը, Ա. Մանասյանը, Հր. Միրզոյանը:

Որոշեցին՝ Ֆակուլտետի դեկանի մեկ տարվա աշխատանքը գնահատել դրական:

Ռեկտոր Ա. Սիմոնյանը ներկայացրեց ԵՊՀ ռազմավարությունը և պատասխանեց ներկաների հարցերին:

Նիստի նախագահ՝ Հ. Ավանեսյան

Նիստի քարտուղար՝ Ս. Սարգսյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2018 թ-ի փետրվարի 21-ին կայացած փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

Օրակարգում՝

1. 2017 – 2018 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփումը;
2. Հոգեբանություն մասնագիտությամբ հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ամփոփիչ ատեստավորման քննության արդյունքների ամփոփում;
3. Բակալավրիատի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պատրաստման և գնահատման կարգը / վերջնական տարբերակ/;
4. Մանկավարժական /4-րդ կուրս/ և արտադրական /3-րդ կուրս/ պրակտիկաների հարցը / զեկ . պրակտիկայի ղեկավարներ/;
5. ԵՊՀ-ի հետ համագործակցության շրջանակներում օտարերկրյա ուսանողների համար անգլերեն լեզվով հոգեբանություն մասնագիտության առկա ուսուցմամբ բակալավրիատի ծրագրի մշակման հարցը;
6. Ընթացիկ հարցեր;

1. Լսեցին՝ 2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների մասին հարցը:

Արտահայտվեցին՝ ղեկան Ա. Բաղդասարյանը ամփոփեց քննության արդյունքները, որոնք գոհացուցիչ են: Պրոֆեսորներ Հր. Միրզոյանն ու Էդ. Հարությունն առաջարկեցին, որ ուսանողի 60 ժամ բացակայության դեպքում պետք է քննություն վերցնել հանձնաժողովով:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն:

2. Լսեցին՝ Հոգեբանություն մասնագիտությամբ հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց արդյունքները, որոնք դրական էին և գոհացուցիչ: Նախագահը ևս դրական եզրակացություն է տվել:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն:

3. Լսեցին՝ Բակալավրիատի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պատրաստման և գնահատման մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց վերջնական տարբերակը: Նա նշեց, որ բողոքարկման կարգի մեջ կա փոփոխություն, ըստ որի ուսանողն իրավունք ունի բողոքարկելու միայն քննության ընթացակարգի վերաբերյալ: Ն. Խաչատրյանը, Լ. Գարգրյանը, Գ Շահվերդյանը նշեցին, որ բակալավրիատի

աշխատանքները ճիշտ կլինի, որ գրախոսվեն մյուս ամբիոններում, իսկ մագիստրոսական թեզերը՝ դրսում:

Որոշեցին՝ ընդունել ի գիտություն:

4. Լսեցին՝ Մանկավարժական և արտադրական պրակտիկաների մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Պրակտիկայի ղեկավարներ Ա. Հակոբջանյանը, Ս. Սարգսյանը . Լ. Գարգրջանը, Է. Ջաքարյանը ներկայացրեցին 3-րդ և 4-րդ կուրսերի պրակտիկաները: Նրանք նշեցին, որ ընդհանուր առմամբ լավ է անցնում պրակտիկան: Գ. Շահվերդյանը և Գ. Պետրոսյանը կարևորեցին հատկապես մագիստրատուրայի պրակտիկայի հարցը, մանավանդ հոգեբանների մոտ:

Որոշեցին՝ Գիտխորհրդի նիստերից մեկին հրավիրել պրակտիկայի ընդհանուր համակարգող պ. Աթայանին, և քննարկել որոշ հարցեր:

5. Լսեցին՝ Օտարերկրյա ուսանողների համար անգլերեն լեզվով հոգեբանություն մասնագիտության առկա ուսուցմամբ բակալավրիատի ծրագրի մշակման մասին հարցը:

Արտահայտվեցին՝ ղեկան Ա. Բաղդասարյանը հանձնարարեց ամբիոնի վարիչներին, ներկայացնելու անգլերեն լեզվով ծրագրերը քննարկման:

6. Ընթացիկ հարցեր:

- Հաստատեցին գիտության կոմիտեին ներկայացվելիք թեմաները;
- Ամբիոնների կողմից ներկայացված աշխատանքների տպագրության ներկայացման հարցը;
- Լ. Ստեփանյանի ղեկավարման երաշխավորման հարցը:

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

Նիստի քարտուղար՝ Ս. Սարգսյան

